

Բանանցի շրջականերում գտնուող Մեծ-Գոմերի խաչին ուխ են գնում աչքացաւ, Ոսկեթելին՝ փորացաւ, Սուրբ Նշանին՝ զլխացաւ ունեցողները: Իսկ Պիրանաւորի խաչի ժայռի միջով անց են կացնում այն երեխաներին, որոնք ուշ են ոտ ելնում:

Պերունիներն ասում են, թէ իրենց մանկութեան ժամանակ միմեանց դրամ փոխ տալիս այս սուրբ Համարուած քարերի առաջ էին տալիս և նրանց վկայ բռնում:

Ժողովուրդը պաշտում է նաև կայծակի Հարուածին ենթարկուած քարերը, ինչպէս օրինակ Միրզիկ գիւղի Խաչ-աղբիւրից փոքր ինչ բարձր գտնուած «Կեծաքարը»:

ՋՐԻ ՊԱՉՏԱՄՈՒՆՔ

Դեռ մինչև այժմ էլ մնում են ջրի պաշտաման մնացորդներ, դեռ մինչև այժմ էլ ժողովուրդը սուրբ է Համարում միքանի աղբիւրներ, նրանց մօտ է ուխտ գնում, մոմեր վառում, աքաղաղ մատղում, իրենց Հիւանդութիւններից բժշկութիւն հայցում:

Այսպիսի աղբիւրներից նշանաւոր են.

Միրզիկ գիւղում «Խաչ-աղբիւրը», որ պաշտում է որպէս մկնատամ Հիւանդութեան բուժիչ. այստեղ առաւելապէս բերում են մկնատամ հանած երեխաներին, մոմեր վառում աղբիւրի առաջ և երեխային լողացնում այդ սառն ջրով:

Բրաջրում «Քոսի (բորոտի) աղբիւրը» առողջութիւն է պարգևում բորոտներին, որոնք նույնպէս մոմեր վառելով նրա առաջ՝ լողանում են: Այս աղբիւրի մասին աւանդութիւնն ասում է, թէ մի կռապաշտ բորոտութեան ախտով բռնուած հալածւում է իւր բարեկամներից և ծնողներից ու անխնամ ընկնում այս աղբիւրի մօտը: Երկար տանջուելուց յետոյ մի ծերունի երևում է նրան և ասում. խոստացիր քրիստոնէութիւն ընդունել և կը բժշկուիս: Երբ այս կռապաշտը խոստանում է, ծերունին դաւադանով խփում է ժայռին և իսկույն այժմեան աղբիւրը բղխում է: «Լուացուիր այս աղբիւրում և կատարիր խոստումդ», ասում է ծերունին և անյայտանում: Հիւանդը

լուացւում է և անմիջապէս բժշկուելով՝ ընդունում քրիստոնէ-
ութիւն: Այդ օրուանից, աւելացնում է աւանդութիւնը, այդ
աղբիւրը սուրբ է համարւում և հազարաւոր մարդկանց բժշկել է:

Քանանց գիւղի սարերում գտնուող պաքերի (համբոյրների)
աղբիւրի ջուրը երիտասարդացնում է մարդուն և սէր ներշնչում:

Քանանցի մօտ գտնուող նահատակի աղբիւրը փարատում
է վիշոյր, թախիծը և առհասարակ բոլոր հոգեկան հիւանդու-
թիւնները:

Նոր-Փիւի գիւղի մօտի Ոսկան նահատակի աղբիւրը բու-
ժում է համրութիւնը, իլութիւնը և կուրութիւնը:

Եղնասարի վանքի աղբիւրը նոյնպէս սուրբ է համարւում
և ուխտաւորները նրա առաջ մօմեր են վառում: Ասում են,
թէ մի անգամ մի անհաւատ կամեցել է պղծել այդ ջուրը,
բայց իսկոյն նա կտրուել է: Յետոյ արդէն արդար մարդիկ
մօմեր են վառել, մատաղ կտրել ու աղօթել՝ մինչև որ նորից
սկսել է բղխել:

Հին-Փիւի գիւղում, եկեղեցուց փոքր ինչ ներքև նոյնպէս
կայ մի սուրբ համարուած աղբիւր, ուր շրջակայ գիւղերից
ուխտ են գալիս:

Աիրանց գիւղի Աաղնի խաչի մօտ կայ մի սուրբ համա-
րուած աղբիւր, որի տակ լողացնում են անդամալուծներին՝
առողջութիւն հալցելով:

Ասում են, թէ ջուրը և կրակը եղբայր և քույր են. մի
անգամ եղբայր-ջուրը իջել է սարից, քույր կրակը ասել է նրան.
«Եկ մի քիչ նստի տաքացի»: Եղբայր ջուրն էլ պատասխանել
է. «Դու էլ մի քիչ ինձանից խմիր հովացիր»:

Առաւելապէս հեքեաթների մէջ պատմւում է «անմահու-
թեան աղբիւրների» մասին, որոնց ջուրը խմելով՝ մարդը ամե-
նայն տեսակ հիւանդութիւններից բժշկւում և անմահանում է:
Այսպիսի աղբիւրները գտնւում են մարդկանց անմատչելի տեղե-
րում և պաշտպանւում են եօթ գլխանի դուերով:

Նոյն հեքեաթներում պատմւում են այնպիսի աղբիւրների
մասին, որոնց տակ եթէ «բաղդաւոր աղամորդին» արժանանայ
գլուխը բռնել, մազերը ոսկու կամ արծաթի գոյն կստանան: